# «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2018 թվականի ձմեռային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին»

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

___ 2018 թվականի N ____-Ն

**ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԶՈՐԱՑՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 25-րդ հոդվածի 1-ին մասերով ու «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով՝ Կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայտարարել 2018 թվականի նոյեմբեր - 2019 թվականի հունվար ամիսներին Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ձմեռային զորակոչը (այսուհետ՝ 2018 թվականի ձմեռային զորակոչ), որոնց 18 տարին լրանում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
2. 2018 թվականի ձմեռային զորակոչի շրջանակներում մինչև 2019 թվականի հունվարի 31-ը ներառյալ զորացրել օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողներին:
3. Այլընտրանքային աշխատանքային ծառայությունից արձակել սահմանված ժամկետում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցած ծառայողներին:
4. 2018 թվականի ձմեռային զորակոչի կազմակերպման նպատակով

ստեղծել հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի, և մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովներ՝ համաձայն N 2 հավելվածի:

5. Հաստատել կենտրոնական բժշկական հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:
6. Պաշտպանության նախարարին՝

1) Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո յոթնօրյա ժամկետում ընդունել շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2018 թվականի ձմեռային զորակոչի անցկացման և օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակելու մասին հրաման՝ դրանում նախատեսելով, որ զինված ուժերի համալրումը շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության կամ այլընտրանքային զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներով և օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողների զորացրումն իրականացվում է 2019 թվականի հունվարի 7-ից մինչև հունվարի 31-ը ներառյալ.

2) 2018 թվականի ձմեռային զորակոչից խուսափող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տվյալներն ուղարկել Ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, իսկ զորակոչի ավարտից հետո՝ նրանց վերաբերյալ կազմված նյութերը Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի համապատասխան կայազորային քննչական բաժիններ:

7. Առաջարկել Գլխավոր դատախազին շարունակելզորակոչից խուսափող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև այդ բնույթի գործերով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը:
8. Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևերից) ղեկավարներին՝

1) հայտարարված զորակոչին զինվորական կոմիսարիատ չներկայացած կամ քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների վերաբերյալ տվյալներ ստանալուց հետո նրանց նկատմամբ կիրառել աշխատանքային, տնտեսական ու այլ ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումներ և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին.

2) իրավասության սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության զորակոչի ենթակա քաղաքացիների ներկայանալը

զինվորական կոմիսարիատներ:

9. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ և 17-րդ կետերի համաձայն, համագործակցելով համապատասխան զինվորական կոմիսարների հետ, սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Առողջապահության նախարարին ներկայացնել բժիշկ-մասնագետների թեկնածություններ:
10. Առողջապահության նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ և 17-րդ կետերի համաձայն կազմավորել զինվորական կոմիսարիատների բժշկական և ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների զորակոչային բժշկական հանձնաժողովներ.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված հետազոտությունների և պատվաստումների իրականացումն ապահովելու նպատակով հանձնարարել իրավասու ծառայություններին՝ համապատասխան բժշկական հաստատություններին ապահովելու անհրաժեշտ քանակով պատվաստանյութերով, ֆլյուորո (ռենտգեն) և ԷՍԳ ժապավեններով, երևակման նյութերով:

11. Արտաքին գործերի նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների միջոցով հյուպատոսական հաշվառման կանգնած պարտադիր զինվորական ծառայության զորակոչման ենթակա Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ծանուցել Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան զինվորական կոմիսարիատներ ներկայանալու համար.

2) աջակցել օտարերկրյա պետություններում գտնվող՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչման ենթակա քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձին և ապահովել դրա մասին իրազեկումը Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարին:

12. Ոստիկանության պետին՝

1) ապահովել՝

ա. հասարակական կարգի պահպանությունը զինվորական կոմիսարիատների և հանրապետական հավաքակայանի տարածքներում,

բ. զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումը Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության

տարածքից դուրս ու նրանց ներկայանալը զինվորական կոմիսարիատներ.

2) զորակոչի ընթացքում զորակոչիկների խմբերը՝ Երևան քաղաքի զինվորական կոմիսարիատից մինչև հանրապետական հավաքակայան, մարզերում՝ մինչև քաղաքային գծի ավարտը, իսկ հանրապետական հավաքակայանից մինչև Երևանի սահմաններից դուրս փոխադրող ավտոբուսներն ուղեկցելու համար կցել ճանապարհային ոստիկանության անձնակազմեր:

13. Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպու-թյունների ցանկը՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով զորակոչիկների փոխադրումներն իրականացնելու համար:
14. Ոստիկանության պետին, Ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ զորակոչի ենթակա քաղաքացիների կողմից զորակոչից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով զորակոչի ընթացքում ուժեղացնել վերահսկողությունը Հայաստանի Հանրապետության սահմանային հաղորդակցության ուղիներում:
15. Կրթության և գիտության նախարարին՝ զինվորական կոմիսարիատների բժշկական և ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների զորակոչային բժշկական հանձնաժողովներում նոր նշանակված բժիշկ-մասնագետների համար, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում պետպատվերի շրջանակներում, կազմակերպել զորակոչիկների ռազմաբժշկական փորձաքննության 35-ժամյա ծրագրով կատարելագործման դասընթացներ:
16. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2018 թվականի

__ -ի N ___ -Ն որոշման

**Կ Ա Զ Մ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Դ. Տոնոյան - Պաշտպանության նախարարի պաշտոնակատար

(հանձնաժողովի նախագահ)

Ա. Դավթյան - ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ

(հանձնաժողովի նախագահի տեղակալ)

Հ. Մուրադյան - ՀՀ զինվորական կոմիսար
Վ. Օսիպյան - Ոստիկանության պետ
Ա. Վանեցյան - Ազգային անվտանգության ծառայության տնօրեն
Ա. Դավթյան - ՀՀ գլխավոր դատախազ
Ա. Հարությունան - Կրթության և գիտության նախարարի պաշտոնակ
Հ. Արշակյան - Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլ
նախարարի պաշտոնակատար
Ա. Թորոսյան - Առողջապահության նախարարի պաշտոնակատա
Զ. Մնացականյան - Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար
Ս. Պապիկյան

- Տարածքային կառավարման և զարգացման նախա
պաշտոնակատար
Կ. Նահապետյան

- ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային ա
գության և ներքին գործերի մշտական հանձնաժողո
նախագահ (համաձայնությամբ)
Ա. Սարգսյան

- ՀՀ զինվորական կոմիսարիատի զորակոչի

բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2018 թվականի

__ -ի N ___ -Ն որոշման

**Կ Ա Զ Մ**

**ՄԱՐԶԱՅԻՆ (ԵՐԵՎԱՆ քաղաքի) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ**

| **Տարածքների և զինվորական կոմիսարիատների անվանումները** | **Հանձնաժողովների անդամներ** | |
|---|---|---|
| **1** | **2** | |
| **<u>Երևան</u>** | | Երևանի քաղաքապետ |
| Երևանի N 1 | | (հանձնաժողովի նախագահ) |
| Երևանի N 2 | Օ. Գասպարյան | ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի առաջին տեղակալ |
| Երևանի N 3 | | Երևան քաղաքի ոստիկանության վարչ |
| Երևանի N 4 | | Երևան քաղաքի կայազորի ռազմական |
| | | ոստիկանության բաժնի պետ |
| | | Երևանի N 1, Երևանի N 2, Երևանի N 3 |
| | | զինվորական կոմիսարիատների զինվո |
| **<u>Արագածոտն</u>** | | Արագածոտնի մարզպետ |
| | | (հանձնաժողովի նախագահ) |
| Արագածոտնի մարզի | Ա. Փիլոյան | 5-րդ բանակային կորպուսի հրամանատ |
| | | Մարզային ոստիկանության վարչությա |
| | | Աշտարակի ռազմական ոստիկանությ |
| | | բաժանմունքի պետ |
| | | Արագածոտնի մարզի զինվորական կոմ |
| **<u>Արարատ</u>** | | ՀՀ Արարատի մարզպետ |
| | | (հանձնաժողովի նախագահ) |
| | Ա. Մարտիկյան | ՀՀ ԶՈՒ ԳՇ հետախուզության վարչութ |
| Արարատի մարզի | | Մարզային ոստիկանության վարչությա |

| | | |
|---|---|---|
| | | Արարատի ռազմական ոստիկանության<br><br>բաժանմունքի պետ<br>Արարատի մարզի զինվորական կոմիս |
| **Արմավիր** | | Արմավիրի մարզպետ<br>(հանձնաժողովի նախագահ |
| Արմավիրի մարզի | Տ. Խաչատրյան | ՀՀ ՁՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակ<br>վարչության պետ<br>Մարզային ոստիկանության վարչությա<br>Արմավիրի ռազմական ոստիկանության<br>Արմավիրի մարզի զինվորական կոմիս |
| **Գեղարքունիք** | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետ<br>(հանձնաժողովի նախագահ |
| Գեղարքունիքի մարզի | Դ. Մանուկյան | 2 -րդ բանակային կորպուսի հրամանա<br>Մարզային ոստիկանության վարչությա<br>Սևանի, Մարտունու ռազմական ոստիկ<br><br>բաժնի պետեր<br>Գեղարքունիքի մարզի զինվորական կո |
| **Լոռի** | | ՀՀ Լոռու մարզպետ<br>(հանձնաժողովի նախագահ |
| Լոռու մարզի | Գ. Խաչատուրով | 3-րդ բանակային կորպուսի հրամանա<br>Մարզային ոստիկանության վարչությա<br>Լոռու կայազորի ռազմական ոստիկան<br>բաժնի պետ<br>Լոռու մարզի զինվորական կոմիսար |
| **Կոտայք** | | ՀՀ Կոտայքի մարզպետ<br>(հանձնաժողովի նախագահ |
| Կոտայքի մարզի | Ա. Մակարյան | ՀՀ ՁՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակ<br>պատրաստության վարչության պետ<br>Մարզային ոստիկանության վարչությա<br>Կոտայքի ռազմական ոստիկանության<br><br>Աբովյանի բաժնի պետ<br>Կոտայքի մարզի զինվորական կոմիսա |
| **Շիրակ** | | Շիրակի մարզպետ<br>(հանձնաժողովի նախագահ |
| Շիրակի մարզի | Ս.Գալստյան | ՀՀ ՁՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակ<br>Մարզային ոստիկանության վարչությա<br>Շիրակի ռազմական ոստիկանության բ<br>Շիրակի մարզի զինվորական կոմիսար |
| **Սյունիք** | | Սյունիքի մարզպետ<br>(հանձնաժողովի նախագահ |
| Սյունիքի մարզի | Ժ. Պողոսյան | 1-ին բանակային կորպուսի հրամանա |

| | | |
|---|---|---|
| | | Մարզային ոստիկանության վարչությա<br>Գորիսի, Կապանի և Սիսիանի ռազմակ<br>բաժնի պետեր<br>Սյունիքի մարզի զինվորական կոմիսար |
| **<u>Վայոց ձոր</u>** | | Վայոց ձորի մարզպետ<br>(հանձնաժողովի նախագահ) |
| Վայոց Ձորի մարզի | Վ. Քոչարյան | 4-րդ բանակային կորպուսի հրամանատ<br>Մարզային ոստիկանության վարչությա<br>Վայքի ռազմական ոստիկանության բա<br>Վայոց Ձորի մարզի զինվորական կոմիս |
| **<u>Տավուշ</u>** | | Տավուշի մարզպետ<br>(հանձնաժողովի նախագահ) |
| Տավուշի մարզի | Ա. Բրուտյան | ՀՀ ՁՈՒ ԳՇ վարչական ապարատի ղեկ<br>Մարզային ոստիկանության վարչությա<br>Իջևանի և Տավուշի ռազմական<br><br>ոստիկանության բաժնի պետեր<br>Տավուշի մարզի զինվորական կոմիսար |

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2018 թվականի

__ -ի N ___ -Ն որոշման

**Կ Ա Զ Մ**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

| | |
|---|---|
| Հենրիկ Կարապետի Մուրադյան | - Հայաստանի Հանրապետության զինվո<br>(հանձնաժողովի նախագահ) |
| Հովհաննես Աստվածատուրի Մինասյան | - Հայաստանի Հանրապետության զինվո<br><br>կոմիսարիատի ավագ բժիշկ, բ/ծ փոխգն<br>(հանձնաժողովի նախագահի տեղակալ) |

| | |
|---|---|
| Սամվել Սուրենի Սահակյան | - Առողջապահության նախարարության |
| Վահան Նաիրիի Մուկուչյան | -թերապևտ |
| Էդուարդ Արմենի Ավագյան | -թերապևտ, բ/ծ կապիտան |
| Հայկ Ռաֆայելի Հովսեփյան | -սրտաբան, բ/ծ փոխգնդապետ |
| Արշակ Վարդգեսի Ղազարյան | -նյարդաբան |
| Մկրտիչ Էդուարդի Դարբինյան | -նյարդաբան, բ/ծ մայոր |
| Սահակ Աշոտի Հակոբյան | -մաշկաբան |
| Գարիկ Մարատի Սողոմոնյան | -վիրաբույժ, բ/ծ մայոր |
| Արամ Աշոտի Միրիջանյան | -վիրաբույժ, բ.գ.թ. |
| Սերգեյ Համլետի Սիմոնյան | -վնասվածքաբան, բ/ծ մայոր |
| Բագրատ Արտաշեսի Բավեյան | -վնասվածքաբան |
| Գարիկ Սմբատի Սարգսյան | -օտոլարինգոլոգ, բ/ծ մայոր |
| Նարինե Լավրենտի Բաղդասարյան | -ակնաբույժ, բ/ծ մայոր |
| Եղիշե Ալիկի Բաղդասարյան | -ակնաբույժ, բ.գ.թ. |
| Տիգրան Շամշադի Սարգսյան | -հոգեբույժ, բ/ծ մայոր |
| Ռուդոլֆ Կնյազի Սարգսյան | -հոգեբույժ |
| Ռաֆիկ Գևորգի Բզանյան | -համակարգ. օպերատոր, ավագ սերժան |
| Անի Սերգեյի Բաբայան | -հանձնաժողովի քարտուղար |